

**Ս. ՅՆԿՈՐԻ ՆԵՐՍԷՆ**

**ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՐԱԿԱՆՔ**

● Կիր. 5 Մայիս. — Կամիլր Կիրակի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Կոմիտաս Արղ. Պատուէրեան:

● Կիր. 12 Մայիս. — Տօն Երեսման Ս. Խաչից: Առաւօտեան ժամերգութիւնէն ետք և Վեղատանէն անմիջապէս առաջ, բոս սօփարութեան, կարգացուեցաւ Ս. Խաչի երևման առիթով Երուսաղէմի Կիրեղ Հայրապետին առ Կոստանդ Վասար ուղղած թուղթը: Ապա Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Վաչէ Արղ. Իգնատիոսեան: Աւագ Խորանին վրայ կը տեսնուէր վառ կանթիզներով զարդարուն Ս. Խաչին նշանը:

● Կիր. 19 Մայիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Կարաբար Ս. Աթոռի գանուսղ Արժ. Տ. Զարէն Քչյ. Մարտեան:

● Դչ. 22 Մայիս. — Կէսօրէ ետք ժամը 2ին, Գերշ. Տ. Սուրէն Արքեպօ. Քեմանեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժերով մեկնեցաւ Զիթենեաց լեռ, ուր մեր Տիրոջ Համբարձման սրբավայրին վրայ կառուցուած մեր վրանամատարան մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւն և նախատօնակ: — Իրիկանդէմին պաշտուեցան Վեկեցէի և Հսկման արարողութիւններ, և ապա՝ գիշերային և առաւօտեան ժամերգութիւններ: Արարողութիւնները տեւեղին մինչև ուշ գիշեր:

● Եչ. 23 Մայիս. — ՀԱՄԲԱՐՁՈՒՄ, ՏԵՍՏԱՆ: Առաւօտեան ժամը 7ին, Գերշ. Տ. Նորայր Եպօ. Պողարեանի գլխաւորութեամբ, ամբողջ Միաբանութիւնը ինքնաշարժերով մեկնեցաւ Զիթենեաց լեռ ու Հրաշափառոյ մուտք գործեց Համբարձման սրբատեղին, ուր մեր վրանամատարան մէջ օրուան շանդիաւոր Ս. Պատարագը մատուցեց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը, խօսելով օրուայ տօնին մասին: Քարոզէն ետք, Գերշ. Լուսարարապետ Տ. Հայրիկ Եպօ. նախագահեց Մայր Աթոռոյ Սուրէն Ս. Էջմիածին փոխադրութեան տարեգարծի առիթով կատարուած Հայրապետական Մաղթանքի արարողութեան, իսկ Ս. Պատարագէն ետք Գերշ. Պատարագիչ Սրբազանը նախագահեց Սրբավայրին առջև կատարուած Վնդաստանին:

— Գերշ. Սրբազանը նախագահեց նաև Կէսօրէ ետք Մայր Տաճարին մէջ կատարուած Անդաստանին:

● Եր. 25 Մայիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Համբարձմ

վերամատարան մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Յովսէփ Վրղ. Մամուր:

— Կէսօրէ ետք, Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ պաշտուեցաւ Բ. Մաղկազարի նախատօնակը: Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպօ. Ասլանեան:

● Կիր. 26 Մայիս. — Երկուրդ Եղիպատ: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ ժամարարն էր վանուց Տեսուչը՝ Հոգչ. Տ. Արշճիկ Արղ. Իսախանսարեան:

**Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք**

● Եչ. 2 Մայիս. — Ն. Վեհ. Հիւսէյն Թագաւորի Թագադրութեան 10րդ տարեգարծին առիթով, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը շնորհաւորական հեռագիր մը յղեց Արքեպօսի Պալատ:

● Եր. 4 Մայիս. — Իսլամաց Գուրդան պալատի տօնին առիթով, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ընկերակցութեամբ Հոգչ. Տ. Կոմիտաս Արղ. Պատուէրեանի և Տիար Կարպիտ Հինդրեանի, շնորհաւորութեան զնաց Վսեմ. Կառ. վարչիչին, Վսեմ. Մի. Քիթիւն, ՄոսթատարՔիւն, Քաղաքապետին, Արեմա. Յորդանանի Ընդ. Ազատութեան Պետին, Կրօնական Դործոց Դայժազամին, Նոր և Հին Քաղաքի Ոստիկանապետներուն և Սէւասի Արարիոյ Հիւպատոսին:

● Կիր. 5 Մայիս. — Բրիտանական Հնագիտական Դպրոցի կողմէ, ի պատիւ ծանօթ ննազէտ Տքթ. Քաթիչին Քէնյընի տրուած ընդունելութեան ներկայ եղաւ Տիար Կ. Հինդրեան:

● Դչ. 7 Մայիս. — Արար-Անկիլքաններու Եպօ. Նէհրպ Գուլէյնի կողմէ, ի պատիւ իրենց եկեղեցւոյ Լիբանանի, Սուրիոյ և Յորդանանի ներկայացուցիչներուն տրուած ընդունելութեան ներկայ եղան Հոգչ. Տ. Յակոբ Վրղ. վարդանեան և Տիար Կարպիտ Հինդրեան:

● Եր. 11 Մայիս. — Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպօ. մեկնեցաւ Անթիլիաս, ներկայ գտնուելու Մեծի Տանն Կիլիկիոյ նորընտիր Հայրապետ Տ. Տ. Խորէն Ա. ի Օձման և Գահակալութեան շանդիսութեանց:

● Կիր. 12 Մայիս. — Տրանսական նոր ընդհ. Հիւպատոսին կողմէ Սէնթ Անն վանքին մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գերշ. Տ. Սուրէն Արքեպօ. և Տիար Կ. Հինդրեան:

● Դչ. 15 Մայիս. — Այս և յաջորդ երկու օրերուն, Ս. Աթոռ այցելեցին Կիլիկիոյ Կաթողիկոսական ընտրութեանց մասնակցելու համար Սփրոնքի զանազան գաղութներէն Անթիլիաս ժամանած թէ՛ եկեղեցական և թէ՛ աշխարհական Պատգամաւորներ: Արտոնց կարգին՝ Թէհրանի Թեմին Առաջնորդ Գերշ. Տ. Արտակ Արքեպօ. Մանուկեան, Ատրպատականի Թեմին Առաջնորդ Հոգչ. Տ. Արսէն Վրղ. Աստիքեան, Իրանէն և Ամերիկայէն Քանանայ Հայրեր:

● Եր. 18 Մայիս. — Ֆրանսական նոր Ընդհ. Հիւպատոսը իր առաջին այցելութիւնը տուաւ Պատրիարքարանին:

— Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Լուսարարացեալ Գերշ. Տ. Հայրիկ Եպս. և Տիար Կարպիտ Նինգլեան շնորհաւորական այցելութիւն տուին Քաղաքիս Վեմ. Կառավարչին, Ն. Վ. Թագաւորին կողմէ անոր շքանշանով պարգևատրուելուն առթիւ:

● Եր. 25 Մայիս. — Յորդանանի Անկախութեան 17րդ տարեկարծին առիթով, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը շնորհաւորական հեռագիր մը յղեց Ամմանի Արքուէիք:

— Նոյն առիթով, Զարքայի Սոյալակոյտի Ակումբին մէջ, Ն. Վեմ. Վարչապետին կողմէ խօստիւ Ն. Վեհ. Թագաւորին տրուած ճաշկերոյթին ներկայ եղաւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ընկերակցութեամբ Արևելեան Յորդանանի Հայոց Հոգեւոր Հովիտի Հոգշ. Տ. Անուշահան Վրդ. Զոյջանեանի:

● Կիր. 26 Մայիս. — Ղպտոց Եպս.ի կողմէ տրուած ճաշկերոյթին ներկայ եղան Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. և Տիար Կարպիտ Նինգլեան:

● Գշ. 28 Մայիս. — Կէսօրէ առաջ, Լուսարարացեալ Գերշ. Տ. Հայրիկ Եպս., հետն ունենալով Հոգշ. Տ. Գեորգ Վրդ. Նաղարեանն ու Տիար Կարպիտ Նինգլեանը, ներկայ եղաւ երկէ վախճանած Քաղաքիս Հայ-Վաթնիկ համայնքի Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Յովհաննէս Ի. Վրդ. Գույումէսեանի հոգեոյն ի հանդիստ իրենց եկեղեցւոյ մէջ մատուցուած Ս. Պատարագին և թաղման արարողութեան:

որուն գլուխը կը գտնուին մանչերու մարզիչ Պր. Միտաք Յակոբեան և իր օգնականը՝ Հայկ Լէփէճեան, ինչպէս նաև աղջկանց մարզիչ Սր. Շուշան Յովսէփեան:

Խաղերու աւարտին, Գերշ. Սրբազանը բաժակներով ու մետաղներով վարձատրեց յաջող մարզիկները: Դաշտահանդէսը վերջացաւ Իւրիկուան ժամը 6:30ին:

**ՏԱՐԵԿԱՆ ԵՐԳԱՀԱՆԳԷՍ**

23 Մայիս, Հինգշաբթի գիշերուան ժամը 8ին, փառանգ. Վարժարանի հանդիսարանին մէջ տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց Երկրորդական վարժարանի տարեկան երգահանդէսը, նախագահութեամբ Գերշ. Տ. Նորայր Եպս.ի և ի ներկայութեան Միաբանութեան անդամներուն և ժողովուրդի ստուար բազմութեան:

Շուրջ երկու ժամերու ընթացքին, ներկաներուն տրուեցաւ վայելքը ունկնդրելու մեր եկեղեցական և ի մասնաւորի տոճմիկ երաժշտութիւնէն կտորներ, մատուցուած յաջող կերպով մեներգներու, զուգերգներու և խմբերգներու միջոցաւ: Դաշնակի և ձեռնադաշնակի վրայ նուագուեցան նաև Երոպական դասական երաժշտութիւնէն կտորներ: Գերշ. Սրբազանի հակիրճ փակման խօսքէն և Տէրունական Աղօթքի երգեցողութիւնէն ետք հանդիսականները մեկնեցան զոճուակութեամբ, իրազեկ ըլլալով վարժարանէն ներս Հայ Երգի ուսուցման տրուած կարևորութեան և այդ ուղղութեամբ տարած տարուան մը աշխատանքի արդիւնքին, ու գնահատանքով արտայայտուելով վարժարանի տեսչութեան և ի մասնաւորի երաժշտութեան ուսուցիչ Պր. Սահակ Գալայճեանի հանդէպ:

**ՏԱՐԵԿԱՆ ՊԱՆՁԱՐ:**

25 և 26 Մայիս, Շաբաթ և Կիրակի օրերուն տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց Երկրորդական վարժարանի տարեկան Պաղարք, հովանաւորութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր: Նորին Ամենապատուութիւնը սակայն Յորդանանի Անկախութեան տօնին առիթով Ամման մեկնած ըլլալով, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., ընկերակցութեամբ Միաբանութեան անդամներուն, կատարեց բացումը Պաղարքին, Շաբաթ կէսօրէ ետք ժամը 4ին:

Այդ և յաջորդ օրուան ընթացքին, բազմաթիւ հայ թէ օտար անձնաւորութիւններ այցելեցին Պաղարքը, նիւթապէս օժանդակելով վարժարանին:

Պաղարքը ունէր ձեռագործներու, խաղերու և ուտեստեղէնի բաժիններ: Վաճառքի զրուած ձեռագործներուն մեծ մասը պատրաստուած էր զպրոցական աշակերտուածներու կողմէ:

**Հ Ա Ն Գ Ի Ս Ո Ւ Թ Ի Ի Ն Ք**

**Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՎԱՐՃԱՐԱՆԻ**

**ՏԱՐԵԿԱՆ ԳԱՆՏԱՀԱՆԳԷՍ**

19 Մայիս, Կիրակի կէսօրէ ետք ժամը 4ին, փառանգ. Վարժարանի մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց Երկրորդական վարժարանի տարեկան Դաշտահանդէսը, նախագահութեամբ Գերշ. Տ. Նորայր Եպս.ի և ի ներկայութեան ստուարաթիւ ժողովուրդի:

Հանդէսը սկսաւ երկուսու մարզիկներու տղանցքով, որմէ ետք վարժարանի աշակերտութիւնը, բաժնուած երկու խումբերու, կատարեց վազքի, բարձր և երկար ոտտուճի, արգելաբշտի և զբօշարշաւի մրցումներ: Տեղի ունեցան նաև շախմատի մարզանք, զուարճախաղեր, գնդարձակում և այլն: Խաղերէն օմանց իրենց մասնակցութիւնը բերին նաև վարժարանի աշակերտուածները, բաժնուած զարձեալ երկու խումբերու: Բարձրախօսով ներկաները հաղորդակից եղան նաև վարժարանէն ներս տարուան մը ընթացքին կատարուած մարզական աշխատանքի արդիւնքին: